Կ-**704**[3]-05.08.2020-ՏՏԳԲ-011/0

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2011 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-280-Ն ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 17-րդ հոդվածի 2.1-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1)-րդ կետով՝ «3.1) լիազոր մարմնին ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու վերաբերյալ միջնորդագրի ներկայացումը.»:

~~**Հոդված 2.** Օրենսգրքի 30-րդ հոդվածի~~

~~1. 5-րդ մասի 2-րդ կետից հանել «, կամ ընդերքօգտագործողը դադարել է անհատ ձեռնարկատեր լինելուց» բառերը:~~

~~2. հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ մասով.~~

~~«6.1. Ընդերքօգտագործման իրավունքը կարող է դադարեցվել բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից լիազոր մարմնին ներկայացված միջնորդագրի հիման վրա: Բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից սույն մասով նախատեսված միջնորդագիրը կարող է ներկայացվել ընդերքօգտագործողի կողմից տեսչական մարմնի տված հանձնարարականը չկատարելու դեպքում՝ հանձնարարականը պարունակող վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում:»:~~

Հոդված 2. Օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի

1. 2-րդ կետից հանել «, կամ ընդերքօգտագործողը դադարել է անհատ ձեռնարկատեր լինելուց» բառերը:

1. 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ստուգմամբ արձանագրված սույն օրենսգրքի պահանջների և պայմանագրային պարտականությունների խախտման վերացման համար տրված հանձնարարականի չկատարման վերաբերյալ ակտն ուժի մեջ է մտել, և ներկայացվել է ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին միջնորդագիր կամ բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող

տեսչական մարմնի ստուգմամբ արձանագրված սույն հոդվածի 5-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված իրավախախտման վերաբերյալ ստուգման ակտ բողոքարկման օրենքով նախատեսված ժամկետը լրացել է, և ներկայացվել է ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին միջնորդագիր»:»

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: